ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ

Տ. ԶԱՔԱՐԻԱ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂՈՒՄՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՁՈՐԱՎՈՐ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ Ս. ԱՆԱՆԻԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐԸ

(17 հոկտեմբերի, 2023 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Ահաւասիկ եմ, Տէ՛ր»
(Գործք Թ. 10)։

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր Հայոց Եկեղեցում մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի 72 աշակերտներից Ս. Անանիա առաքյալի հիշատակության օրն է, երբ կրկին ուխտավորաբար աղոթքի ենք կանգնած Երեւանի Ձորավոր Ս. Աստվածածին եկեղեցում, որի հարեւանությամբ կառուցված դամբարան-մատուռում են ամփոփված համաքրիստոնեական այս սրբի մասունքները։ Մայրաքաղաքի կենտրոնում շենքերով շրջապատված այս սրբատեղին դարձել է յուրօրինակ նվիրական վայր, երբ ցանկացած պահի եւ ժամի կարող ենք գալ, աղոթել, մեր սիրտը բացել Աստծու առաջ, հայցել Ս. Անանիայի բարեխոսությունը եւ հոգեպես մխիթարված ու լիցքավորված տուն վերադառնալ։ Այստեղ ժամանակն ասես կանգ է առել, իսկ լռության մեջ Աստված խոսում է մեզ հետ՝ կտրելով քաղաքի աղմուկից, աշխարհային թոհուբոհից ու մարդկանցից։ Անբացատրելի զգացողություն ես ապրում մանավանդ երեկոյան ուշ ժամերին, երբ դրսում մութ է, եւ համատարած լռություն, կարող ես իջնել մատուռ-դամբարանի լուսավոր աստիճաններով, որոնք քեզ երկրից երկինք են առաջնորդում եւ աղոթքի մղում։

Դարերի ընթացքում ինքնաքննության եւ մտահայեցողության այս սրբավայրում շատերն են աղոթել եւ բժշկվել, շատերին է օգնության

հասել երանելի սուրբն աստվածճանաչողության ճանապարհին կամ նրանց կյանքի դժվար պահերին։ Այն եղել եւ մնում է մարդու եւ Աստծու յուրատեսակ հանդիպատեղի երեւանցիների եւ նաեւ ինձ համար, ուր հաճախ եմ գալիս՝ զորանալու, մխիթարվելու եւ պարզապես Աստծու հետ խոսելու համար։ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու տեղանքն ամենքիս հիշեցնում է նաեւ լուսավոր այն ժամանակների մասին, երբ Ս. Անանիայի անապատում ծաղկում էր հոգեւոր-մշակութային կյանքը, իսկ մեր Եկեղեցու նվիրյալ եկեղեցականները մարդկանց կրթում եւ դաստիարակում էին Աստծու խոսքով, սուրբ հայրերի խրատներով։ Հազար փա՜ռք Տիրոջը, որ այսօր էլ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու ժրաջան հոգեւորականների ու տարիների ընթացքում ձեւավորված նախանձախնդիր համայնքի շնորհիվ ծաղկում է հոգեմտավոր կյանքը, իսկ նրա լուսե խորանից շարունակում բաշխվել Տիրոջ կենդանարար մարմինն ու արյունը։ Այս ոգեղինության ու հոգեւոր վերարթնության պատճառը նաեւ Ս. Անանիայի մասունքներից հանապազ ճառագող լույսն ու օրհնությունն են, որոնք դիպչում են ամեն մարդու սրտին եւ հրաշքներ գործում։ Օրհնյալ այս օրը պատեհ առիթ է նաեւ մեզանից յուրաքանչյուրի համար՝ անդրադառնալու Ս. Անանիայի կյանքին ու վերստին թերթելու Ս. Գրքի էջերը։

Հրաշագործ այս սուրբը Ս. Պետրոս եւ Ս. Անդրեաս առաքյալների աշակերտն ու գործակիցն էր, որին Կեփաս-Պետրոսը Դամասկոսի եպիսկոպոս ձեռնադրեց։ Ըստ վարքագրական աղբյուրների՝ նա «մարմնով փառահեղ էր, սրտով՝ շատ հեզ ու հանդարտ, Աստծու Հոգով լի, խոսքերում՝ ճոխ, գործերում՝ զվարթ»։ Ս. Անանիային Տերը հատուկ առաքելություն էր վերապահել։ «Գործք առաքելոց»-ը պատմում է, որ նրան տեսիլքում հայտնվում է Հիսուս եւ ձայն տալիս, ինչին ի պատասխան՝ Ս. Անանիան անվարան ասում է. «Այստեղ եմ, Տե՛ր»։ Հիսուս պատվիրում է նրան գնալ «Ուղիղ» կոչվող փողոցով եւ գտնել այն տունը, որտեղ աղոթում էր Սողոսը՝ ապագա Ս. Պողոս առաքյալը։ Ս. Անանիան քաջատեղյակ էր եկեղեցահալած Սողոսի կյանքի մանրամասներին, ուստի հասկանալի է նրա պահվածքը, ավելի ճիշտ՝ զգուշավորությունը. ինչպե՞ս օգնել մեկին, որն ամեն կերպ խոչընդոտում է քրիստոնյաներին, նրանց համար զանազան խնդիրներ ստեղծում... Անսալով Հիսուսին՝ Ս. Անանիան հասնում է Տիրոջ մատնանշած վայրը, ձեռքը դնում Սավուղի վրա՝ ասելով. «Սավո՛ւղ, եղբայր»։ Սա է իրական քրիստոնեական սերը, երբ անծանոթին, այս

դեպքում՝ հարազատներիդ եւ Եկեղեցուդ հալածողին, ոչ ավել, ոչ պակաս կարողանում ես «եղբայր» կոչել։ Այստեղ է Քրիստոսի եւ քրիստոնեության զորությունը, որ միավորող, նախապաշարմունքները քանդող հատկություն ունի։ Եւ, ինչպես նույն «Գործք»-ում է ասվում, այդ ժամանակ բացվում են Սողոսի աչքերը, եւ նա մկրտվում է Ս. Անանիայի ձեռքով։ Ուրեմն՝ այսօր հիշատակն է մի սրբի ու Քրիստոսի վկայի, որ ոչ միայն տեսիլքում ազատ խոսում եւ շփվում էր Հիսուսի հետ, այլեւ նրա, որ քրիստոնյա դարձրեց 13-րդ առաքյալին։ Հետագայում Ս. Անանիա առաքյալը, չուրանալով Հիսուսին եւ մինչեւ կյանքի վերջին շունչը հավատարիմ լինելով Նրան, նահատակության պսակին արժանացավ։

Սիրելի՛ ուխտավորներ, այսօրվա սուրբգրային պատմությունը կանչի մասին է։ Ինչպես Աստված մարդկության պատմության ընթացքում կանչեց, կարեւոր առաքելության համար ընտրեց Իրեն հավատարիմներին՝ այդ թվում նաեւ Ս. Անանիա եւ Ս. Պողոս առաքյալներին, այնպես էլ Տերն ամեն օր կանչում է մեզ տարբեր ձեւերով, երբեմն նաեւ՝ մարդկանց միջոցով, մեր սրտի դռները բախում՝ ամենքիս ավելի ուժեղ, հուսառատ, մեղքերից ձերբազատված ու մաքուր տեսնելու անհագ ցանկությամբ։ Ամեն մարդու աստվածճանաչողության ուժգին կանչն ու ձգտումը տարբեր են։ Երբեմն այդ կանչը լսում ենք եւ փորձում մեր կյանքը շտկել, վերափոխվել, ընդառաջ գնալ Տիրոջը, երբեմն էլ այն կորչում է կյանքի ամենօրյա հոգսերի եւ դժվարությունների խառնարանում։ Բայց որպես սիրող եւ գթած Հայր՝ Աստված շարունակում է անընդհատ կանչել ու կանչել, քանի որ ուզում է մեզ փրկված տեսնել՝ նյութականից ձերբազատված, հոգեպես զորացած եւ մշտարթուն, որպեսզի Տիրոջ կանչելու ժամանակ Ս. Անանիայի նման անվախ կարողանանք ասել. «Այստեղ եմ, Տե՛ր»։ Ասել է թե՝ պատրաստ ենք պատասխանատվություն ստանձնելու եւ առաքելությանդ մեկ մասնիկը եւ Եկեղեցու գործուն անդամը դառնալու՝ մեր կենցաղավարությամբ ամեն վայրկյան վկայելով մեր հանդեպ տածած անմնացորդ սիրուդ եւ անբավ ողորմությանդ մասին։

Քրիստոնյայի կանչն սկսվում է Ս. Մկրտության խորհրդով, որը մեր հավատքի ճանապարհի սկիզբն է, երբ ուխտում ենք նոր կյանք սկսել Քրիստոսով՝ այս կյանքում ամեն ջանք գործադրելով հավիտենականին արժանանալու համար։ Աստծու կանչին անսալն ու հավատարմությունն այլակերպում են մեզ, ավելի լավը դարձնում, եւ ամենակարեւո-

ը՝ հույս տալիս դժվարություններն ու մարտահրավերները հաղթահարելու եւ ամեն տեսակի պատերազմներից հաղթանակած դուրս գալու համար։ Եկեք անկեղծ լինենք եւ ամեն մեկս մեզ հարց տանք ու վերհիշենք, թե մեր կյանքում քանի՛ անգամ է Աստված կանչել մեզ, մեր ձեռքից ամուր բռնել, փորձել հեռու պահել մեղքերից ու վատ արարքներից։ Իսկ ի՞նչ ենք արել մենք նման իրավիճակներում։ Հաճախ քաջ գիտակցելով Աստծու կանչի կարեւորությունը եւ պահի լրջությունը՝ անգամ անդրադարձ չենք կատարել, ուժ չենք կարողացել գտնել մեր մեջ՝ ո՛չ ասելու մեղքին, մեզ պատուհասած մոլություններին ու սխալներին՝ մտածելով, որ դեռ ժամանակ կունենանք ապաշխարելու, դարձի գալու համար, մի քիչ էլ կյանք անենք, վայելենք այս աշխարհը։ Մինչդեռ առաքյալն ասում է. «Ահա հիմա է ընդունելի ժամանակը, ահա հիմա է փրկության օրը» (Բ. Կորնթ. Զ. 2)։ Անսա՜նք առաքելական խոսքին, մեզ տրված ժամանակն իմաստավորված եւ ճիշտ գործածենք՝ բարությամբ, սիրով, համբերատարությամբ աշխարհն ավելի լավը դարձնելով, իսկ կյանքի գույները՝ երփներանգ ու վառ, որոնք կվկայեն քրիստոնեական ամուր հավատի եւ անխախտ հույսի մասին։

Քրիստոնյա՛ եղբայրներ եւ քույրեր, այսօր Աստված բոլորիս խորհրդավոր այս եկեղեցին է կանչել՝ կրկին համախմբվելու Ս. Հաղորդության բաժակի շուրջ, Իրեն փառաբանելու եւ հարության հույսով զորանալու։ Ամեն անգամ այդ կանչն զգալիս կամ լսելիս անպայման եկեղեցի գնացե՛ք, հայոց Նոյան տապանի մեջ մտե՛ք, որպեսզի հոգու փրկություն ունենաք։ Միշտ հիշե՛ք, որ մեր եկեղեցիները պարզապես աղոթքի տուն կամ մոմավառության վայրեր չեն եղել եւ այսօր էլ այդպիսին չեն, այլ վերածվել են կրթադաստիարակչական դարբնոցների, լույսի եւ հույսի շտեմարանների։ Իրականում հենց Հայոց Եկեղեցում է բացահայտվում եւ ամբողջանում ազգային-քրիստոնեական մեր ինքնությունը, ու առավել ընդգծվում հայկականության դրոշմը, որի անդաստանում ստեղծված հոգեւոր հարուստ ժառանգությունն էլ ապահովում է ծագումնաբանական կապը մեր նախնիների հետ։ Անհերքելի փաստ է, որ հաղթանակներ ենք տարել եւ հաջողություններ արձանագրել այն ժամանակ, երբ ունեցել ենք ուժեղ եւ առողջ ինքնություն, հստակ ծրագիր եւ ռազմավարություն, իսկ դրանց տկարացումը կամ իսպառ բացակայությունը հանգեցրել են ողբերգությունների եւ կորուստների։ Բայց մենք իրավունք չունենք ընկճվելու, ինքնամփոփվելու եւ հուսահատվե-

լու նույնիսկ անելանելի թվացող այս իրավիճակում, քանզի Քրիստոսի անհաղթ բանակից ենք եւ հարության իրականությամբ գոտեպնդված։ Վստահաբար, քրիստոնեական լավատեսությամբ, ամենօրյա աշխատանքով ու նպատակասլացությամբ ամեն ինչ էլ ժամանակի ընթացքում հաղթահարելու ենք։ Մեզ մնում է ուժեղ լինել, ապրել ու ապրեցնել՝ հայցելով Աստծու օգնականությունն ու բյուրավոր սրբերի բարեխոսությունը մեր ազգի համար։

Թող Ս. Անանիա առաքյալի բարեխոսությունը մշտապես մեզ հետ լինի, իսկ Աստծու կանչը հասնի ամենքիս. ամեն։